

կու մեծ վարդապետ աստուածակոյս կողմանէ ետ մեղ Աստուած՝ Մովսէս եւ Պօղոս, որ խիստ յօժար եւ փափաք էին եկեղեցի շինելն, դպրատուն հաստատելն եւ ուսուցանելն... եւ հոգեւոր հայրն իմ յԱզուլիս դպրատուն շինեաց եւ յիսունեւօթնէն աւելի մանկունք կու դային, եւ նոցա ուսուցանողն Տէր Անդրէաս պատուական քահանայն² :

Այս տէր Անդրէասն է, որ 1617, Նոյ. 18ին, նահատակուեցաւ յԱզուլիս : Երբ Շահարաս եկած էր Ազուլիս, տէր Անդրէաս ի յարգանս չահին հանած էր իւր դպրատան աշակերտները փողոց. Շահը նկատելով որ «ածիւլեալ են կուլակք մանկանցն», կը համարի թէ իրեն անհաճոյ ընծայելու համար զանոնք, այսպէս ամիլած են³. կը հրամայէ երեւան հանել ամիլել տուողը : Տէր Անդրէաս ինք զինքը կ'ամբաստանէ. եւ կը նահատակուի : Հաղիւ երեք կամ չորս ամիս անցած էր դէպքիս վրայ, երբ կրկին խօսք կ'ըլլայ Շահ Արասի ներկայութեան այս խնդրի մասին : Ազուլեցի մահամեղական մը՝ Շահուղ րէկ⁴ կը պատմէ

² Արարատ, 1902, էջ 438 :

³ Գրիգոր Դարանաղցի (էջ 290) այս դէպքը այսպէս կը պատմէ. «Շահն տղայոց մանկանց զիւլեֆ կուլակ թողուլ կու տայ, իւր ճորտ եւ զուլութեան աղաղաւ. նա՛ վարդապետք խրատեր են թէ ոչ է օրէնք թիստոնէի այդպէս առնել : Եւ ոմն քահանայ կու ջանայ որ ջնջեն զզիւանուէր նշանն ի գլխոց տղայոցն» :

⁴ Դարանաղցւոյ համաձայն մատնիչն է Տէր Անդրէասի հետ բռնուած արեղայ մը, որ կ'ուրանայ. «նա մատնէ զվարդապետքն թէ՛ նոքա ուսուցին մեկ այնպէս առնել». էջ 290—291 :